ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2025 թվականի N 58 Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Երևան քաղաքի բնակիչ, <<ՅԱՆ ՏԵՔՍՏԻԼ>> ՍՊԸ գործադիր տնօրեն Արման Վարազդատի Սմբատյանը 2025թ. փետրվար ամսվա ընթացքում Շատին գյուղի 5-րդ փողոցի 1 փակուղի 1/1 շենքի հարակից տարածքում համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողամասում, առանց համապատասխան թույլտվության ինքնակամ իրականացրել է շինարարություն՝ ճանապարհի ձախակողմյան հատվածում մոտ 15 մետր երկարությամբ և մոտ 1,5 մետր բարձրությամբ կառուցել է բետոնյա հենապատ, ինչով խախտվել են Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթեր տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>> 15-ը մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման պահանջները: Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Կառավարության <<Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին >> 15-ը մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման պահանջները խախտելու համար կասեցնել Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Շատին գյուղի 5-րդ փողոցի 1 փակուղի 1/1 շենքի հարակից տարածքում <<ՅԱՆ ՏԵՔՍՏԻԼ>> ՍՊԸ գործադիր տնօրեն Արման Վարազդատի Սմբատյանի կողմից իրականացվող շինարարությունը:

2.Առաջարկել Ա. Սմբատյանին շինարարությունն իրականացնել ՀՀ կառավարության 15-ը մարտի 2015 թվականի N 596-Ն որոշմամբ պահանջվող փաստաթղթերի առկայության դեպքում:

4.Որոշումն ուժի մեջ է մտնում պատճենը Արման Սմբատյանին հանձնելու հաջորդ օրվանից և կարող է գանգատարկվել դատական կարգով՝ երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՇՈՏ ԳՍԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. փետրվարի 14 հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2025 թվականի N 57 Ա

ՆՈՐԻԿ ՌԱՖԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի 10042S9D4GES քաղվածքը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Եղեգիս համայնքի Արտաբույնք գյուղի բնակիչ Նորիկ Ռաֆիկի Սարգսյանի (ընտանիքի գլխավորը) և նրա ընտանիքի անդամներ՝ Ալվարդ Վահիկի Կարապետյանիյանի (կինը), Լուսինե Նորիկի Սարգսյանի (աղջիկը), Աննա Նորիկի Սարգսյանի (աղջիկը) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը (կադաստրային ծածկագիր՝ 10-010-0089-0017) տրամադրել Եղեգիս համայնք, Արտաբույնք գյուղ, 3-րդ փողոց, տուն 8 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՇՈՏ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
2025 թ. փետրվարի 14 հ.Եղեգիս